«47-Ի ԽՄԲԻ» ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍԱԿԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԻ ԱՐՏԱՑՈԼՈՒՄԸ ԱԼՖՐԵԴ ԱՆԴԵՐՇԻ ՎԵՊԵՐՈՒՄ

Գերմանացի գրող և հրապարակախոս Ալֆրեդ Անդերշը (1914-1980) կանգնած էր "47-ի խումբ" գրական միավորման ակունքների մոտ: Նա առանցքային դեր խաղաց այդ խմբի ձևավորման, դրա գրական ու գաղափարախոսական հիմքերի ստեղծման գործում:

Մինչ «47-ի խմբի» ստեղծումը երիտասարդ գերմանացի գրողները գտնվում էին մշտական որոնումների մեջ, նրանց շարքերում տիրում էր խառնաշփոթ, չկար գեղարվեստական ու գաղափարական հայեցակարգ: Այս ժամանակաշրջանում միակը, ով փորձում էր ինչ-որ կերպ ուղղորդել ու համախմբել երիտասարդ գրողներին՝ «Դեռ Ռուֆ» հանդեսն էր, որը ղեկավարում էին Ալֆրեդ Անդերշն ու Հանս Վերներ Ռիխտերը:

«47-ի խմբի» ստեղծումից հետո խմբի մեջ մտած գրողները, նրանց թվում նաև Ա.Անդերշը, իրենց առջև առաջին հերթին քաղաքական ու հասարակական խնդիրներ էին դրել: Որքան խումբը մեծանում էր քանակապես և որակապես, այնքան երիտասարդ գրողների մեջ թուլանում էր հակումը ավագ սերնդի գրողների նախընտրած «մոգական իրատեսության» հանդեպ, որն իր տեղը զիջում էր իրատեսական գրականությանը, քանի որ հենց այս ոճն էր առավել ընդունելի ու արդյունավետ գերմանական նացիստական անցյալն ու պատերազմը պատկերելու համար: Ալֆրեդ Անդերշը «47-ի խմբում» դարձավ այն փոքրաթիվ գրողներից, ովքեր ստեղծագործում էին էկզիստենցիալիզմի ոճով:

Ալֆրեդ Անդերշը ծնվել է Այունխենում, ազգայնամոլ սպայի ընտանիքում: Պատանեկան հասակում տարվել է կոմունիստական գաղափարներով, եղել Գերմանիայի Կոմունիստական Կուսակցության երիտասարդական միության անդամ: Սակայն մեկ տարի անց՝ նացիոնալ-սոցիալիստների իշխանության գալուց հետո, ապագա գրողը հիասթափվեց կոմունիստներից, նրանց մեղադրելով «անգործության» մեջ, ինչն էլ հենց, ըստ Անդերշի, թույլ տվեց, որ իշխանությունը գավթեն ազգայնամոլներն ու երկրում հաստատեն բռնապետական ռեժիմ: Ավելի ուշ ինքնակենսագրական «Ազատության բալենիները» (1952) վեպ-էսսեում (որը հեղինակը անվանում է "հաղորդագրում", "հաշվետվու-

թյուն"). վերհիշելով իր կոմունիստական անցյալը. Անդերշը գրում է. «Ես կոմունիզմի հողի վրա ոտք դրեցի լարված հիացմունքով, որպես մի մարդ, որն առաջին անգամ է հայտնվում կուսական աշխարհամասում: Այն ինձ համար բացարձակապես նոր էր. ուրիշ. և ես ժլատորեն ներշնչեցի բուրմունքը վայրի կյանքի, որն ինձ օգնեց ազատագրվել իմ մանրբուրժուական շրջապատից: Հեղափոխություն բառը կախարդեց ինձ: Հանկարծակի պայծառացման արագությամբ ես իմ հոր ազգայնամոլական ուսմունքներից անցա սոցիալիզմի. մարդասիրության և կեղեքվածների ազատագրման գաղափարներին.»:[1]

1933 թվականին նացիստները Անդերշին ձերբակալեցին և տեղափոխեցին Դախաուի համակենտրոնացման ճամբար: Անդերշը գրում է. «նացիստները խեղդեցին իմ հեղափոխական պատանեկությունը: »:[2]

Ինչպես Հ.Վ.Ռիխտերը, Անդերշը ևս ծառայում էր Արևմտյան ռազմաճակատում Իտալիայում. Անդերշը ողջ հոգով ատում էր նացիզմն ու պատերազմը. ինչը նրան դրդեց 1944 թվականի ամռանը դասալքել. անցնել ռազմաճակատի գիծն ու գերի հանձնվել դաշնակից զորքերին:

Գերությունից վերադառնալուց հետո Անդերշը աշխատում էր անվանի գերմանացի գրող էրիխ Քեսքների հետ «Նոյե Ցայթունգ» խմբագրությունում. իսկ 1946-1947 թվականներին Ռիխտերի հետ մեկտեղ դարձավ հականացիստական «Դեռ Ռուֆ» ամսագրի խմբագիրը: Ամսագրի առաջին համարում հրապարակվեց Անդերշի «Երիտասարդ Եվրոպան ձևավորում է իր տեսքը» (1946) հոդվածը. որում մասնավորապես խոսվում է «բռնապետության փոխարեն» դասեր քաղելու անհրաժեշտության. հետպատերազմական Գերմանիան ոտքի հանելու. նրանում ժողովրդավարական կարգեր հաստատելու մասին:

Իր հուշերում Անդերշի գործընկեր Հայնրիխ Բյոլը նշում է. որ «Ազատության բալենիները» ստեղծագործությունը լույս տեսավ այն պահին. երբ Արևմտյան Գերմանիայում հականացիստական գրականության շուրջ ստեղծվել էր «հեղծուցիչ լռություն»: Նման մթնոլորտում Անդերշի ստեղծագործությունը ընկալվեց «որպես շեփորի կանչ»[3] և մեծ տպավորություն թողեց հականացիստական տրամադրություն ունեցող գերմանացիների վրա:

Ի թիվս այլ հարցերի Անդերշը «Ազատության բալենիները» վեպ-էսսեում անդրադառնում է անհատի «ազատ ընտրության» գաղափարին. որը նրա համար բարձրագույն արժեք է: Ըստ Անդերշի մարդկային մեծությունը իրականու-

---

[1] A.Andersch. Die Kirschen der Freiheit, Zürich, 1968, s. 25–26

[2] Նույն տեղում, s. 80

[3] H.Lehnert. Die Gruppe 47, – In: «Die Deutsche Literatur der Gegenwart. Aspekte und Tendenzen». Hrsg. von N.Durzak. Stuttgart, 1971, s. 34

թյուն է դառնում «որոշման վայրկյանին» նախորդած «ակնթարթներին», հատկապես այս ակնթարթներին է իրականացվում «բացարձակ ազատության հնարավորությունը, որը տնօրինում է մարդը»:[4]

«Բացարձակ ազատության» որոնումներում Անդերշի հերոսները գալիս են հետևության, որ ցանկացած պետական համակարգ իր մեջ պարունակում է վտանգ, որն ուղղված է իրենց անհատական ազատության դեմ: Եվ այդ իսկ պատճառով նրանք համոզված են, որ ազատություն ձեռք բերել և պահպանել կարելի է միայն խղճի, սեփական բարոյական սկզբունքների վրա հենվելով:

Ալֆրեդ Անդերշի վեպերի հերոսները մշտապես առաջնորդվում են «ամեն գնով ողջ մնալու» մղումով, ինչը բնորոշ էր նաև հեղինակին: «Ազատության բալենիներ» վեպում գրողը դասալքությունը դիտում է որպես ինքնապաշտպանության ծայրահեղ միջոց, որին անհատը դիմում է վախի ու սարսափի ուղղակի ազդեցության տակ, որպես փրկության միակ միջոց: Անդերշի այս էկզիստենցիալիստական հայեցակարգում վախի զգացումը կարևորագույն դեր է խաղում. նա է մարդկային արժեքների ուղղորդիչը: Նա է անհատին մղում հոգևոր դիմադրության, թույլ չտալով, որպեսզի նա կորցնի իր հոգևոր ու բարոյական արժեքները, իր «ես»ը, ազատության զգացումը: Ընդ որում, «ամեն գնով ողջ մնալու» ձգտումը, ըստ Անդերշի, անհատին ստիպում է ընդունել ինքնուրույն, ոչ մեկի կողմից չթելադրված որոշում:

Անդերշի հերոսների մոտ նման դիրքորոշումը պայմանավորված է ցանկացած գաղափարախոսության հանդեպ անվստահությամբ: Գրողը խոսում է իշխանական հզոր մեքենաների, քաղաքական ու գաղափարախոսական համակարգերի դեմ անհատի «անպաշտպանվածության» մասին, որոնք կարծես անդունդի պես քաշում, ձգտում են կուլ տալ անհատին, ու նրան թաղել իրենց խորքերում: «...Տախտակամածին գամված Ոդիսևսը լսում էր սիրենաների երգը, - գրում է Անդերշը, - և մենք էլ մեր XX դարի Ոդիսևսի հետ շրջապատված ենք գաղափարախոսությունների սրտաճմլիկ ձայներով: Սարսափելի հանցագործություն է թույլ տալ, որ քո կապերը քանդեն»:[5] Ըստ Անդերշի, անհատը պետք է «գամված մնա տախտակամածին», որպեսզի չդառնա գաղափարախոսությունների գերին: Դրանում է նա տեսնում անհատի գլխավոր խնդիրը. եթե նա ցանկանում է պահպանել «ազատ ընտրության» իրավունքը:

Գաղափարախոսական ճնշումներին Անդերշի հերոսները պատասխանում են «հեռանալու», նրանց կողմից պարտադրված «խաղից» դուրս գալու

---

[4] A.Andersch, Die Kirschen der Freiheit, Zürich, 1968, s. 98
[5] Նույն տեղում, s. 24

իրենց որոշմամբ: Նրանք ձգտում են փրկվել անդեմ ու դաժան համակարգից, փախչելով այն «անդունդի եզրից», որը իրեն անվանում է գաղափարախոսություն: Այս քայլը կատարած անհատը Անդերշի էկզիստենցիալիստական պատկերումներում հայտնվում է խորհրդավոր ու անորոշ ոլորտում՝ «Աստծո ու ոչնչի» միջև, որն էլ հենց նշանակում է ազատություն:

«Զանզիբար, կամ վերջին պատճառը» վեպում Անդերշը հանդես է գալիս ընդդեմ մարդկային հոգու թուլության, փոքրահոգության, հաստատելով բարոյական ամբողջականությունը պահպանելու անհատի ունակությունը: Վեպում գրողը նացիստական օրինականացված բարբարոսությանն ու դաժանությանը հակադրում է «ազատ անհատի» հոգևոր ուժը, նացիզմի հանդեպ բարոյական առավելությունը այն մարդկանց, ովքեր հույսը դնում են սեփական բանականության վրա: Վեպի կերպարները ընդունում են միակ մեկ անհրաժեշտություն անձամբ ընտրել և անձամբ պատասխանատվություն կրել: Այս առումով վեպի հերոս Գրեգորը, առավել քան մյուսները, մարմնավորում է անհատի պատասխանատվության գաղափարը, նրա կողմից ցանկացած իրավիճակում ազատ ընտրություն կատարելու իրավունքի պահպանումը, որն Անդերշը ներկայացնում է «Ազատության բալենիներ» վեպում:

«Զանզիբար, կամ վերջին պատճառը» վեպի հերոսները միաժամանակ թե նացիզմի թշնամիներն են, և թե զոհերը: Նրանք իրենց անհատական ազատությանը սպառնացող վտանգը տեսնում են բռնապետության կազմակերպված ու անթերի գործող ուժի մեջ: Այս ուժով էլ պայմանավորված են նրանց ձգտումներն ու քայլերը՝ «դուրս պրծնել» բռնապետության ազդեցության ոլորտից ու հայտնվել «ազատ միայնակության», մեկուսացման մեջ:

Ալֆրեդ Անդերշի գործընկեր Առնո Շմիդտը, վերլուծելով «Զանզիբար, կամ վերջին պատճառը» վեպը, գալիս է հետևության, որ ստեղծագործությունը ոչ միայն պարզաբանումներ է մտցնում գերմանական պատմության մեջ, այլև հարց է բարձրացնում այն մասին, թե ինչպե՞ս և ինչո՞ւ նացիստական Գերմանիան, իսկ ավելի ուշ Արևմտյան Գերմանիան դարձավ մի «երկիր, որից փախչում են»: Նշելով, որ Անդերշի վեպը խոր մտորումների տեղիք է տալիս, Շմիդտը իր հերթին հարցնում է, թե ինչո՞ւ Էյնշտեյնը, Թոմաս Մանը, Հերման Հեսսեն 1945 թվականից հետո չվերադարձան հայրենիք, ինչո՞ւ երկրից արտագաղթածները պատերազմից հետո իրենց բնակության վայրը չնտրեցին Արևմտյան

Գերմանիան: Անդերշի վեպը, ըստ Շմիդտի, «անհերքելի մեղադրանք է Գերմանիային» և միաժամանակ «բոլորին հասցեագրված նախազգուշացում»:[6]

Մեղադրանք է հնչում նաև Անդերշի հաջորդ «Շիկահեր կինը» (1960) վեպում, որում Անդերշը ներկայացնում է զուգահեռ զարգացող երկու այուժետային գծեր, որոնց կենտրոնում՝ մարդու հուսալքվածության և միայնակության թեման է: Այս երկու թեմաները միավորում է երրորդ անհաղթահարելի անցյալի, նացիզմի թեման: «Շիկահեր կինը» ստեղծագործության մեջ նացիզմը ներկայանում է իր իրական դաժան ու անմարդկային դեմքով, որպես համամարդկային չարիք: Վեպում որպես նացիստների հավաքական կերպար է ներկայանում ցինիկ մարդասպան ու դահիճ Կրամերը: Նա շատ նման է գերմանացի արձակագիր Վոլֆգանգ Քյոփենի «Մահը Հռոմում» (1954) վեպի կերպարներից մեկին գեներալ Գոթլիբ Յուդեյանին, որը անցյալում գլխավորում էր հիտլերյան բանակի «լավագույն» ստորաբաժանումը էսեսական «Մեռած գլուխ» պատժիչ ջոկատը: Վեպում Յուդեյանը ներկայանում է որպես նացիոնալ-սոցիալիզմի կույր գործիք, որն օժտված է անմարդկային դաժանությամբ: Վեպի դրվագներից մեկում դիակառք հիշեցնող մեքենայից դուրս եկող Յուդեյանին ծաղրելով ու հեգնելով, Քյոպենը գրում է. «Ոդիսևսը չէ՞ արդյոք սա, որ ցանկացել է այցելել աստվածներին: Ոչ, Ոդիսևսը չէ, Իթակայի մոլորված թագավորը չէ, այս մարդը դահիճ է: Նա հայտնվել էր մեռյալների թագավորությունից, նրանից դիակային հոտ էր փչում, իսկ անձամբ նա՝ մահն էր, բիրտ, նենգ, անշրջահայաց, անտաղանդ մահը»:[7]

Ինչպես «Շիկահեր կինը» վեպի հերոս Կրամերը, այնպես էլ Յուդեյանը, փախել է Իտալիա, որպեսզի խուսափի նախկինում կատարած ոճրագործությունների համար պատասխանատվությունից: Ինչպես ցույց են տալիս գերմանացի երկու գրողները, երկու հերոսներն էլ իրենց շատ լավ են զգում Հռոմում: Յուդեյանը այստեղ զբաղված է նորագույն զենքեր գնելով, քանի որ նախապատրաստվում է ռևանշի՝ նոր Գերմանիայի համար հաղթական պատերազմի: Ինչ վերաբերում է դահիճ Կրամերին, ապա նա այստեղ ստեղծել է նախկին նացիստների ու նրանց հովանավորողների հետ միջազգային լայն կապեր և իրեն լիովին վստահ է զգում:

Նացիզմի ու անհաղթահարելի անցյալի թեման արծարծվում է նաև Անդերշի հաջորդ «Էֆրաիմը» (1967) վեպում, որի համանուն լրագրող հերոսը գրողի նախորդ հերոսներից՝ Գրեգորիից ու Ֆաբիոյից «ժառանգել է» ատելու-

---

[6] A.Schmidt, Das Land, aus dem man Flüchtet, – «Über Alfred Andersch», HRSG, von G.Haffmans, Zürich, 1974, s. 56–60

[7] Koeppen Wolfgang, Der Tod in Rom, München, 1954, s. 16

թյունը «գաղափարախոսական ու քաղաքական համակարգերի հանդեպ»: Էֆրաիմին ևս բնորոշ է էկզիստենցիալիստական աշխարհընկալումը. շրջապատող աշխարհը նրան է ներկայանում որպես քաոս ու աբսուրդ, որոնց դեմ անհատը անզոր է:

1974 թվականին լույս տեսավ Անդերշի վերջին «Վինտերսփելտ» վեպը, որում հեղինակը կրկին կարևորում է անհատի բարոյական դիրքորոշումը, պարտքի մեծ զգացումը, որը բացահայտվում է բռնության հետ բախման պահին: Այստեղ էլ Անդերշի հերոսները կանգնում են ընտրության առջև, որը սակայն դուրս է անձնական հարաբերությունների սահմաններից: Ներկայացնելով կյանքի բարդ իրավիճակներում մարդկային պահվածքի տարբեր դրսևորումներ, հեղինակը ստիպում է խորհել անհատի արարքների հասարակական հետևանքների մասին:

Ըստ Անդերշի, գրականությունն ու արվեստը պետք է ծառայեն մարդուն, նրանք անպատճառ պետք է պատկերեն մարդկային ապրումները, հույսերը, տառապանքները, այն ամենը, ինչը գրողը անվանում է «հոգևոր գործընթացներ»: Այդ իսկ պատճառով նա չի ընդունում «նոր վեպը», որը մերժում է մարդկային հոգևոր աշխարհի պատկերումը: Անդերշին, ինչպես և "47-ի խմբի" յուրաքանչյուր գրողի, խորթ է մտավորականի և, հատկապես, գրողի կրավորական կեցվածքը: Անհրաժեշտ է մշտապես գործել, ահազանգել,պայքարել՝ այլապես նացիզմը կարող է կրկնվել գերմանական պատմության մեջ:

The reflection of ideological principles of "The 47's Group" in the novels of Alfred Andersch

Alfred Andersh (1914-1980) was one of the founders of the well-known literary union- "The 47's Group", wich was formed in the Western Zone of the post-war Germany The young generation of German writers was in search of new ideological conception as well as the new ways of expression of the actual problems of that transitional period.

This article deals with the novels of Alfred Andersh "Cherries of freedom", "Zanzibar, or The last cause", "The Blonde", "Ephraim", where the author's idea of spiritual freedom of individual, his free will is expressed in the allegorical form. He speaks of the moral position of the writer and his active social role. A.Andersch reminds us with his novels of the danger of nationalism.